ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 9, 1956 Общественные науки

Ա. Ադամյան

ՆՈՐ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԿՈՄԻՏԱՍԻ ՄԱՍԻՆ

Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարանի արխիվում են գտնվում երաժշտագետ Կոմիտասի (Սողոմոն Սողոմոնյան) Գևորգյան ճեմարանի աշակերտական և հետագա շրջաններին վերաբերվող մի շարք վավերագրեր, որոնք արժեքավոր տեղեկություններ են պարունակում մեծ երաժշտագետի կյանքի և գործունեության վերաբերյալ։

Ինչպես հայտնի է, Գևորգյան ճեմարան ընդունվելու համար դիմող աշակերտը պարտավոր էր ճեմարանի վարչությանը ներկայացնել համապատասխան փաստաթղթեր, որոնք պահվում էին նրա աշակերտական գործում (ամեն աշակերտ ուներ իր գործը)։ Նման մի գործ կազմվել է նաև Կոմիտասի համար, ուր և պահվել են բավական թվով փաստաթղթեր, որոնցից կարևորների վրա ցանկանում ենք կանգ առնել։ Կոմիտասի աշակերտական գործի կարևոր փաստաթղթերից է, ամենից առաջ ծննդյան վկայականը, որից երևում է, որ նա ծնվել է 1869 թ. սեպտեմբերի 26-ին։ Այսպիսով պարզվում է, որ սխալ է սեպտեմբերի 28-ը կամ հոկտեմբերի 10-ը Կոմիտասի ծննդյան ամսաթիվը համարելը, որին քաղաքացիություն են տվել մեր բանաստեղծները[1]։ Ստորև բերում ենք ծննդյան վկայականի տեքստը։

«ՎԿԱՅԱԿԱՆ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

Կը վկայվի, որ Սողովմոն, Սողոմոն[2] Գևորգեան ծնած է 1869 սեպտ. 26-ին և Կուտինայի Ս. Թեոդորոս եկեղեցին 1869 թ. սեպտեմբեր 29 մկրտված է։

Հորն անունը — Գևորգ Սողոմոնյան
Մորն անունը — Թագուհի Հովհաննիսյան Պրուսացի
Կնքահոր անունը — Հարություն Սողոմոնյան
Մկրտող քահանային անունը — Տեր Ղազարոս»[3]։

Կոմիտասի աշակերտական այդ գործում արժեքավոր է Կուտինա (Քյոթահիա) քաղաքի թաղական խորհրդի 1881 թ. սեպտեմբերի 7-ին Գևորգ կաթողիկոսին ուղղած գրությունը, որով հայտնում են, որ ճեմարանի պահանջի համաձայն, խորհուրդը, Քյոթահայից ուղարկել է որբ, ազգականներից զուրկ, լավ վարքի տեր արժանավոր 12 տարեկան Սողոմոն Սողոմոնյանին ճեմարանում սովորելու համար։

Այդ մասին նրանք գրում են.

---

1 Տես Կոմիտաս, ժողովածու, նվիրված Կոմիտասի ծննդյան 60-ամյակին, Երևան, 1930 թ.։ Տես նաև «Կոմպիդիտորներ», Երևան, 1941, էջ 176։

2 Պետք է լինի Սողոմոնյանց։

3 Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, Արխիվային բաժին, Գևորգյան ճեմարանի արխիվ, թղթ. № 3, վավ. № 47, էջ 3։

«Վեհագույն հրամանավ և շնորհիվ Ձերդ Սրբազնասուրբ օծության ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանին գեր. վերատեսչության կողմե Քեոթահիո վիճակեն ևս քանի ինչ ամիս առաջ պահանջված էր մանուկ մի, որպես զի ուսումն և կրթություն ստանա ի բարձրագույն ճեմարանի անդր։

Այս անգամ Գեր. Առաջնորդին Տեղույս Տ. Գևորգ Ծ. վարդապետի Դերձակյան ի ս. Էջմիածին ուղևորելուն առթիվ ճամբա կդնենք 12—13 տարեկան բնիկ Կուտինացի Սողոմոն Ս. Գևորգյան անուն տղայ մի, որոյ հետ կը գտընվին ընդ ամենախոնարհ գրույս և այն վկայականներն, որք հարկ դատյալ են յընդունելություն յուր ի ճեմարանն մանկանս, որ թե աշակերտ վարուքն և բարուք, և թե որբ ի հորե և ի մորե և զուրկ ի կարևոր մերձավորացն լինելով ամենայնիվ որպես կարծեմք արժանավոր գտանք այս մեծի շնորհին, որով ընդ վեհապանծ հովանավորության Ձերդ Սրբազնագույն Վեհափառության յուր մեծի անվան նվիրյալ այդ լուսո տաճարին մեջ գիտության որդեգրյալ հայ մանկտին մեյ մեկ արձան անմար աստուծոյ պիտի լինին ապագային, այն մեծագործությանց՝ որով Ձերդ Վեհափառությունն արդարև խիստ փառավոր տեղ մը գրավյալ ունի արդարև ի պատմության գերերջանիկ Հայրապետացն Ազգիս...»[1]։

Կոմիտասի աշակերտական գործի փաստաթղթերից ուշադրության արժանի է նաև Կուտինայի Ազգային վարժարանի հայոց լեզվի մանկավարժության ուսուցիչների կողմից 1881 թ. սեպտեմբերի 7-ին Կոմիտասին տված բնութագիրը։ Ուսուցիչները բնութագրում են նրան որպես իրենց դպրոցի ջանասեր և օրինակելի աշակերտներից մեկի։ Նրանք նաև նշել են Կոմիտասի աղքատ և անօգնական լինելը։

«Սողոմոն Ս. Գևորգեյան,— գրում են նրանք,— տասներկու կամ տասներեք տարեկան մանուկն, աշակերտ Ազգային վարժարանին Կուտինայու, կարդայր այժմ ի դպրոցին մերում զնախակրթութիւն, այսինքն զընթերցարան Գարագաշեան ի տաճկերէն թարգմանելով ի քերականութեան այն ինչ սկսեալ և զԱռաջին հոլովումն ևեթ աւարտեալ. իսկ ի թուաբանութեան գրել զթիւս մինչև ցհարիւր հազարաւոր և զչորս գործողութիւնս կատարել։ Պարկեշտ վարուքն և փութաջան ի բնէ գոլով՝ եթե ոչ համեմատ հասակին գտանիցի զոր ընթեռնուն և զոր ուսեալն է, ոչ այլ ինչ է պատճառ՝ այլ անոք և անօգնական իւրումն վիճակ, որով չկարաց անընդհատ յուսումն հանապազորդել և երբեմն իսկ յօտարութիւն թափառեցաւ առ հարկի աղքատութեան զոր վկայելով ի գիտութիւն ստորագրեմք ասդէն...[2]։

1881—1893 թթ. Կոմիտասը սովորում է և ավարտում է Գևորգյան ճեմարանը։ Նա ուսանողական շրջանում աչքի է ընկնում իր ընդունակությամբ, համառ աշխատասիրությամբ և վայելում է ուսուցիչների սերն ու հարգանքը։ Այդ է վկայում ճեմարանի դասախոսների կողմից 1892 թ. Կոմիտասի արձակուրդ գնալու առթիվ Գևորգյան ճեմարանի վարչությանը տված գրությունները։ Հիշյալ գրություններից պարզվում է, որ Կոմիտասը տասը տարի իր ծննդավայրից բացակայելուց հետո, 1892 թ. մայիսին դիմում է ճեմարանի վարչությանը ծննդավայր գնալու թույլտվություն ստանալու համար։ (Դժբախտաբար Կոմիտասի արձակուրդ գնալու թույլտվություն խնդրելու դիմումը չի պահպանվել

---

[1] Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Գևորգյան ճեմարանի արխիվ, թղթ. № 3, վավ. № 47, էջ 1։

[2] Նույն տեղում։

նրա գործում)։ Ճեմարանի վարչությունը՝ ստանալով Կոմիտասի դիմումը, ճեմարանի դասախոսներից գրավոր կարծիք է պահանջել Կոմիտասին տարեվերջին քննություններից ազատելու և արձակուրդ թույլատրելու հավանության մասին։ Կոմիտասի գործում պահպանվել են դասախոսների գրավոր կարծիքները, ուր նրանք նշում են, որ Կոմիտասը ջանասեր, բարեխիղճ և հրաշալի սովորող է, որի պատճառով հնարավոր է նրան ազատել տարեվերջին քննություններից, փոխադրել 4-րդ լսարան և թույլատրել արձակուրդ զնալու։

Կոմիտասի դասախոս, հայտնի մանկավարժ Սեդրակ Մանդինյանը 1892 թ. մայիսի 7-ին իր գրության մեջ հետևյալ պատասխանն է ուղարկել Տեսչության հարցումին. «Շնորհունակ Սողոմոն սարկավագը Ձեր պատվիրանոք, պատմեց ինձ յուր ուղևորվելու հանգամանքները և հարցնում է իմ կարծիքը նորան թույլ տալու հնարավորության մասին։

Այսպիսի դեպքեր պատահել են ճեմարանում, որովհետև խնդրողը իմ առարկայից բարեխղճությամբ է պարապել հընթացս ուսման, ես կարող եմ ազատել նորան քննությունից»[1]։

Ուշագրավ է հայ գրող, գրականագետ, դարձյալ ճեմարանի դասախոս Լևոն Մանվելյանի կարծիքը Կոմիտասի մասին։

«Աչքի առաջ ունենալով, որ սարկավագ Սողոմոնյանը բարեխղճությամբ հետևել է իմ առարկայի դասընթացին, և այն բացառիկ հանգամանքը, որի շնորհիվ նորա քննությունից ազատվելը կարևոր կարելի է համարել, իմ առարկային վերաբերյալ նորան արգելք չեմ տեսնում»[2]։

Կրկնություն չլինելու պատճառով մեջ չենք բերում ճեմարանի մյուս դասախոսներրի կարծիքը Կոմիտասի մասին։ Նրանք բոլորը իրենց գրավոր կարծիքների մեջ դրվատում են Կոմիտասին, ներկայացնում նրան որպես օրինակելի, ջանասեր և արժանիքներ ունեցող ուսանողի։

Գևորգյան ճեմարանի լսարանական դասընթացը ավարտելուց հետո, ինչպես հայտնի է, ուսանողները ճեմարանի Մանկավարժական խորհրդի համաձայնությամբ, ընտրում էին որևէ մի թեմա և գրում ավարտական շարադրություն։ Մատենադարանի արխիվում պահպանվել են Գևորգյան ճեմարանն ավարտող ուսանողների ավարտական շարադրությունները, որոնց թվում նաև Կոմիտասի 1893 թ. ապրիլի 25-ին ճեմարանի Մանկավարժական խորհրդին ներկայացրած «Շնորհալին, նորա դարը և նորա ժամանակ հուզված կրոնական խնդիրները» խորագրով գրած ընդարձակ շարադրությունը։

Ավարտական շարադրության մեջ Կոմիտասը կանգ է առնում Շնորհալուց առաջ Հայաստանում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների վրա։ Այդ թվում նշում է Բագրատունիների թագավորության կործանման պատճառները, հայ ժողովրդի մի մասի արտագաղթը մայր երկրից դեպի Կիլիկիա, Ռուբինյան թագավորության կազմակերպումը, խաչակրաց արշավանքը և նրանց հետապնդած քաղաքական նպատակներն ու ձգտումները։ Այնուհետև նա շարադրում է Ն. Շնորհալու կենսագրությունը կապված իր ժամանակի քաղաքական, կրոնական անցուդարձի հետ։ Շարադրության վերջում Կոմիտասը հանգամանորեն վերլուծման է ենթարկում Շնորհալու մատենագրական աշխա-

---

1 Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Գևորգյան ճեմարանի արխիվ, թղթ. № 3, վավ. № 47, էջ 7։

2 Նույն տեղում, էջ 8։

տանքները, գրած բանաստեղծությունները, լեզուն, ոճը, բանաստեղծությունների մեջ գործադրած հայկական, արաբական տաղաչափական ձևերը և այլն[1]։

Կոմիտասը 1893 թ. ավարտում է Գևորգյան ճեմարանի լրիվ դասընթացը և նշանակվում ճեմարանի երաժշտության ուսուցիչ։ Նա կազմակերպում է երաժշտական խմբակներ, որոնց մեջ ընդգրկում է երաժշտության ընդունակ ուսանողների և ամեն կերպ աշխատում է նրանց հմտացնել հայկական երաժշտության մեջ։ Նա այդ ժամանակ արդեն ճանաչված է եղել որպես հայկական երաժշտության հմուտ և տաղանդավոր մասնագետ, որի պատճառով նրան են դիմել հայկական երաժշտության այս կամ այն հարցերը պարզաբանելու, կամ հայկական երաժշտությամբ, երգերով զբաղվողներին ստուգելու և իր կարծիքը տալու նրանց մասին։ Այդ տեսակետից ուշագրավ է Կոմիտասի 1894 թ. փետրվարի 6-ին Մեսրոպ արքեպիսկոպոսին գրած նամակը, որով հայտնում է, որ իրենց պատվերի համաձայն քննության է ենթարկել մի տիրացուի և գտել է, որ հայ եկեղեցական երաժշտության ձայնագրության մեջ նրա գիտելիքը խառնաշփոթ է և մոտ մեկ տարի է հարկավոր նրան սովորել, որպեսզի նա կարողանա անսխալ ձայնագրել և երգել հայկական եկեղեցական երաժշտությունը։ «Զհրաման պատուիրանի — գրում է նա — ընդ ձեռն Արժանապատիւ Ղևոնդ վարդապետի և ի բան բերանոյն, ընկալայ, ոՁերոյին Բարձու Սրբազնութեան, յուրախութիւն և ի խինդ. արդ ի յօժար կամս ի կատար ածի զերկեան աւուրս՝ յառաւօտու, քննեալ զտիրացուն և տեսեալ զթերութիւնսն, որ յարուեստի երաժշտութեան՝ յեկեղեցական Ձայնագրութեան Հայոցս, գամ յայտ առնել ի լուր Ձերդ բարձր Սրբազնութեան, եթէ՝ գիտութիւնն յարուեստիդ և եթ զխառնաշփոթութեան բերէ զնմանութիւն, զորս յուղղութիւն ածելոյ նախ յառնուազն ժամանակ սահմանեալ, պէտք են թերևս ընթացք յամմի, զի կարող իցեն յանսայթաք և յանշեղ գիտութիւն երգել և ի ձայն առնել, առհասարակ, զհամբայի գիտութիւնն զգեղարուեստիդ ի կիր արկանել յեկեղեցական եղանակս վարժելոյ և եթ յաղագս։ Իսկ յընթացս երկուց ամսոց զբաւեմ բնաւիմբ գուցէ զթերիսն յուղղութիւն ածեալ ուր թէ դնել և զհիմն ի նորոյ, և ի կարճ ժամանակի ի դերև ելանեն յանօգուտս և ջանք և վաստակք և ժամանակն օճան գոլոյս և ուսանելոյն, որ վասն զի վեր ասացելովքս զորոց զայս»[2]։

Այս տեսակետից ուշադրության արժանի է նաև Կոմիտասի 1894 թ. հուլիսի 5-ին Երևանի փոխ թեմական Կյուրեղին ուղղած նամակը, որով հայտնում է, որ իր աշակերտներից մեկը Կարապետ Ասկարյանը լավ սովորել և ավարտել է իր կազմակերպած երաժշտական դպրոցը և ստացել է վկայական։ Ապա խնդրում է Կ. Ասկարյանին նշանակել հայկական ծխական դպրոցներից մեկում, որպես երգեցողության դասատու։

«Եթէ հնար ինչ իցէ,— գրում է Կոմիտասը — խնդրի, Զկարապետն Տէր Աստուածատրեան Ասկարեանց ի Վաղարշապատ գեղջէ, նշանակել ի հրաման Ձեր բարձրապատութեան ի միում դպրոցաց Հայոց ծխականաց թեմիդ, տալով զուսուցչութիւն երգեցողութեան Հայոց դպաշտօն նմա, զի նա՝ Կարա-

---

[1] Տես Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, Արխիվային բաժին, Գևորգյան ճեմարանի արխիվ, թղթ. № 44, վավ. № 40։ Կոմիտասի հիշյալ շարադրությունը, որոշ կրճատումներով տպագրվել է «Էջմիածին» ամսագրի 1930 թ. մայիս-հունիս և հուլիս-օգոստոս համարներում։

[2] Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, Արխիվային բաժին, կաթողիկոսական դիվան, թղթ. 236 11-րդ, վավ. № 169։

պետն, ուսեալ է յինէն ի լիր զբովանդակն գեղարուեստիւ զվերոհիշելոյս անթերի, և իմ տուեալ է արդէն զվկայականն, որ վասն ուսեալ դոլոյն յինեն։ ի նոյն իսկ ի վկայական կարէք ճանաչիլ զյառաջադիմութեան նորա զչափ»[1]։

Մեր բազմավաստակ երաժշտագետը՝ Սողոմոնը, ձեռնադրության ժամանակ 1894 թ. վերանվանվում է Կոմիտաս։ Բաբկեն աբեղան 1894 թ. սեպտեմբերի 11-ին Կյուրեղ Սրապյանին գրած նամակում հայտնում է. «Հայրապետը նոր անուններ շնորհեց մեզ, Կարապետ մնաց Կարապետ, Ստեփաննոս՝ Բաբկեն, Սողոմոն՝ Կոմիտաս...»[2]։

Կոմիտասը, ինչպես հայտնի է, բացառիկ սեր և գուրգուրանք է ցուցաբերել հայրենի հնությունների նկատմամբ, մեկնել է պատմական հուշարձաններով հարուստ վայրերը, հնությունները տեսնելու և ուսումնասիրելու նպատակով։ Այդ տեսակետից հետաքրքիր է Կոմիտասի 1895 թ. հունիսի 6-ին բանասեր Մեսրոպ արքեպիսկոպոսին ուղղած դիմումը, որով թույլտվություն է խնդրում ճեմարանի աշակերտների հետ միասին Անի քաղաք էքսկուրսիա գնալու։ «Եթե կարելի է,— գրում է նա,— խոնարհաբար խնդրում եմ, թույլատրեցեք ինձ ճեմարանի աշակերտների հետ գնալ Անի տեսնել, որն և միևնոյն ժամանակ ինձ համար կլինի ամառնային օգափոխութեան միջոց։ Ճեմարանի վարչությունը ամառն այստեղ մնացող աշակերտաց երկու խմբի բաժանեց, որոնցից մեկի առաջնորդողը ես պիտի լինեմ։ Ուստի խնդրեմ Ձեր բարձր սրբազնութեան տնօրէնությունը»[3]։

Ինչպես պարզվում է Կոմիտասը 1895 թ. ցանկություն է ունեցել որոշ ժամանակ Պետերբուրգում աշխատելու, որի համար դիմել է Պետերբուրգի հայկական եկեղեցու հոգևոր խորհրդի անդամ Տիրայր վարդապետին։

1895 թ. հոկտեմբերի 14-ին Տիրայր վարդապետը Պետերբուրգից իր մտերիմ քահանաներից մեկի միջոցով պատասխանել է հետևյալ երկտողով.

«...Սողոմոնը — Կոմիտասը գրել էր, որ այստեղ իմանամ իր համար, թէ չէ՞ կարող գալ։ Գալ շատ դժվար է, որովհետև այնքան ռոճիկ չեն տա։ Կա մի ելք։ Եկող տարի Եկմալյանը այստեղի եկեղեցու համար պետք է պատրաստած բերի 6 երգիչ և մի կառավարիչ։ Ահա այդ կառավարիչը կարող է լինել Սողոմոնը։ Ամսենն ստանալով ամենաշատը 50—60 ր. եթե կթողնեն նորան այստեղ գալ, իսկ այլ հնար չկա։ Այնպես որ եթե ուզում է այդ պայմանը այս ձմեռ պիտի գնա Տփխիս կամ գարնանը, որ իր կառավարչության գործի հետ ծանոթանա Եկմալյանի և նրա խմբի հետ և նոցա հետ գալ մայիսին։ Խորհեցեք, տեսեք...[4]։

Կոմիտասը մի քանի տարի ճեմարանում աշխատելուց հետո, որոշում է թողնել ճեմարանը և գնալ Գերմանիա երաժշտական բարձրագույն կրթություն ստանալու։ Գերմանիա գնալու համար նրան անհրաժեշտ էր ճեմարանի ավարտական վկայականը, որը մինչև այդ, նա չէր ստացել։ Հիշյալ վկայականը ստանալու համար 1896 թ. ապրիլի 25-ին նա ճեմարանի վարչությանը ներկայացրել է հետևյալ դիմումը։

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, Արխիվային բաժին, Անհատական արխիվների ֆոնդ (Կ. Սրապյանի արխիվ), թղթ. № 82, վավ. № 811։

[2] Նույն տեղում, էջ 826։

[3] Նույն տեղում, թղթ. № 183, վավ. № 7։

[4] Նույն տեղում (Տիրայրի արխիվ), թղթ. № 128, վավ. № 30։

«1892/93 ուսումնական տարեշրջանում ավարտեցի Գևորգյան Հոգևոր ճեմարանը, բայց ցարդ մրցանակագիրս չեմ ստացել, խոնարհարար խնդրում եմ տնօրինել»[1]։

Կոմիտասն արտասահման գնալ և իր միջոցներով սովորել, բնական է, չէր կարող։ Մանթաշյանը հանձն է առնում արտասահմանում սովորելու նրա ծախսերն իր վրա վերցնել, որից հետո նա 1896 թ. մայիսին մեկնում է Գերմանիա։ Նույն թվականի հուլիսի 18-ին Բեռլինից Մեսրոպ Սմբատյանին գրած նամակից երևում է, որ Գերմանիայում գտնված ժամանակ Կոմիտասի նյութական միջոցները լավ չեն եղել։ Սակայն լավ չի եղել Կոմիտասի նյութական և բարոյական վիճակը նաև էջմիածնում եղած ժամանակ։ Հիշյալ նամակում նա գրում է.

«Այսօր ստացա պաշտոնական գիրդ, անմիջապես պատասխանում եմ։ Ես արդեն դեռ անցյալ տարվան վերջում հրաժարվեցա ճեմարանի ուսուցչությունից, որովհետև նիարդային սաստիկ տկարություն ստացա, որով ցայսօր էլ տառապում եմ։ Եթե երգերիս և երկերիս տպագրությունը և իմ նյութական ապրուստի հոգսը չլինէր, արդեն քաշուած կլինեի իմ խցիկի մեջ և եթե թողնեին հանգիստ, ինձ համար կաշխատեի, գիտցածներս լոյս կհանեի։

Այնպես, որ ինձ այլ ևս իրր ուսուցիչ ճեմարանի, չսպասեիք և ոչ մի անդամ, որ բացի տկարությունից, ուրիշ շահ չլերավ ինձ համար։

Զարմանում եմ քեզ վրա, թե ինչպես հանձն առել տեսչություն այս խառնակ օրերումդ»[2]։

Մեծ երաժշտագետը հայրենիքին ծառայելու վեհ գաղափարներով տարված, հետագայում մոռացության է տալիս էջմիածնի ճեմարանում կրած նյութական և հոգեկան դրկանքները և 1899 թ. երբ վերջացնում է երաժշտական բարձրագույն կրթությունը, վերադառնում է էջմիածին և նույն թվականի ուսումնական տարում նշանակվում է ճեմարանի երաժշտության դասախոս։ Նախքան հայրենիք վերադառնալը, Կոմիտասը 1899 թ. մայիսի 10-ին և հուլիսի 14-ին Բեռլինում երկու դասախոսություն է կարդում հայկական ժողովրդական և եկեղեցական երաժշտության մասին, որոնք մեծ գնահատականի են արժանանում մասնագետների կողմից։

Մի քանի տարի ճեմարանում աշխատելուց հետո, Կոմիտասը մեկնում է Եվրոպա համերգներ և դասախոսություններ տալու նպատակով։ Նա իր կարդացած դասախոսություններով և ներկայացրած համերգներով Եվրոպայի խոշոր երաժշտագետների ուշադրությունն է հրավիրում հայկական երաժշտության վրա և նա ճանաչվում է որպես տաղանդավոր երաժշտագետ։

Ուշագրավ է 1905 թ. ապրիլի 4-ին գրած մի նամակը, որից պարզվում է, որ այդ ժամանակ Կոմիտասը եղել է Երևանում և զբաղվել է եկեղեցական երաժշտության ուսումնասիրությամբ և մշակմամբ։

«Կոմիտաս հայր սուրբը Երևանումն է,— գրում է հեղինակը,— նորան ասացի, նա ասում է, որ դեռ «Սուրբ ես Տէրը» ինքն էլ չի մշակել բոլորովին, ուստի և անպատրաստ գրությամբ չի կարողանա տալ, իսկ էջմիածնում երգում

---

[1] Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Գևորգյան ճեմարանի արխիվ. Բդթ. 3, վավ. № 47, էջ 4։

[2] Հայկ. ՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Անհատական արխիվների ֆոնդ. Բդթ. № 33, վավ. № 110։ Սույն վավերագրի բնագիրը մեր տրամադրության տակ չլինելու պատճառով, վավերագիրը վերցրել ենք մի մեջբերման օրինակից։

են մեծ շարականի միջինը, որ շատ աննշան տարբերությամբ նման է Ս. Խաչում երգածներին...»[1]։

Ինչպես հայտնի է, Կոմիտասը 1905 թ. մեկնում է Փարիզ, դասախոսություններ տալու և երաժշտագիտության մեջ ավելի կատարելագործվելու նպատակով։ Այդ մասին արժեքավոր է 1905 թ. մայիսի 20-ին՝ ճեմարանի տեսուչ, բանասեր Կարապետ Կոստանյանի Ղուկասյան կտակակատարի հանձնաժողովին ուղղած պաշտոնական գրությունը, որով հարց է հարուցում հանձնաժողովի առաջ, որ ճեմարանի նախկին աշակերտ, հետո ազգային և եկեղեցական երաժշտության դասատու Կոմիտասը կարոտ է կատարելագործվելու երաժշտական գիտության մեջ, որի համար անհրաժեշտ է Ղուկասյան կտակից մի գումար հատկացնել նրան՝ Եվրոպա գնալու և երաժշտական գիտության մեջ կատարելագործվելու համար։

«Դպրապետ վանից ս. Էջմիածնի, ուսուցիչ ճեմարանիս և նախկին սան Տ. Կոմիտաս վարդապետ,— գրում է նա,— որ վարժեալ է յեկեղեցական և յազգային երաժշտութեան, կարոտ է այժմ կատարելագործութեան յարևստիս յայնմիկ գէտ յրնթացս ամսոց ինչ տեղիս տեղիս երաժշտական հռչակաւոր հաստատութեանց։ Վարչութիւն ճեմարանիս արժան համարելով տալ նմա առ այդ կէտ նպատակի նպաստ ի գումարաց Ղուկասեան հրիտակին այսու միջնորդ հանդիսանայ առ պատուարժան կտակակատարդ և արգոյաբար խնդրէ, եթէ հնար իցէ, յատկացուցանել ի գումարաց յիշեալ հրիտակին ի նպաստ Տ. Կոմիտաս վարդապետի մասին ինչ ի պէտս ճանապարհորդելոյ յԵւրոպայ ի կատարելագործումն արուեստին երաժշտութեան»[2]։

1906 թ. փետրվարի 15-ին Կոմիտասը մի հայտարարություն է տալիս ճեմարանի տեսչին, որով հայտնում է, որ ինքը անձնական գործերով մեկնելու է արտասահման։ Հայտարարության մեջ նա գրում է. «Արտասահման եմ գնալու անձնական անհրաժեշտ գործերով, խնդրեմ յայտնեցեք Նորին Վեհափառության ի բարեհաճ տնօրինություն»[3]։

1906 թ. մեկնում է նա Փարիզ և Փարիզի երաժշտական դպրոցում զբաղվում է տալիս «Հայ ժողովրդական երաժշտությունը» թեմայով և մեծ գնահատականների է արժանանում եվրոպական երաժշտագետների կողմից[4]։

Կոմիտասը հայ արվեստի մասնագետ Գարեգին Լևոնյանի հետ միասին ծրագրում է Էջմիածնում հրատարակել գեղարվեստական-գրական մի ամսագիր, նպատակ ունենալով բարձրացնել հայ երաժշտության հետ կապված կարևոր հարցերը։ Այդ տեսակետից ուշագրավ է արվեստագետ և բանասեր Գարեգին Լևոնյանի 1906 թ. փետրվարի 25-ին Գևորգյան ճեմարանի տեսչին ուղղած մի դիմումը։ Իր դիմումի մեջ նա գրում է. «Նպատակ ունենալով իմ պաշտոնակից Հ. Կոմիտաս վարդապետի հետ միասին առաջիկա աշնանից ս. Էջմիածնում հրատարակելու մի գեղարվեստական-գրական հանդես, այժմյանից դիմումն ենք անում, ում հարկն է, պատշաճավոր թույլատրություն ստանալու

---

1 Կաթողիկոսական դիվան, թղթ. № 337 2-րդ, վավ. № 83։

2 Հայկ. ՍՍՌ Գետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Գևորգյան ճեմարանի արխիվ, թղթ. № 38, վավ. № 3, էջ 103։

3 Նույն տեղում, թղթ. № 38, վավ. № 3, էջ 142։

4 Տես Հայկ. ՍՍՌ Գետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Անհատական արխիվների ֆոնդ (Տիրայրի արխիվ), թղթ. № 133, վավ. № 2։

Դիմելով Ձեզ, Արժանաշնորհ և հ. Տեսուչ, խնդրում եմ ճեմարանի դիվանից տալ ինձ մի վկայական, իմ այդ հաստատութեան մէջ չորս տարի ծառայելու վերաբերմամբ, որ մեր այլ փաստաթղթերի հետ միասին ուղարկենք Երևանի պ. նահանգապետինն»[1]։

Ազգային կուլտուրայի լայն զարգացում և խորը ըմբռնում է ունեցել Կոմիտասը։ Նա սերտ կապերի մեջ է եղել հայկական առաջավոր մտավորականների հետ և իր խորհուրդներով և գործնական օգնությամբ զարկ է տվել հայ կուլտուրայի զարգացմանը։ Այդ տեսակետից կարևոր փաստաթուղթ է գրականագետ Արշակ Չոպանյանի 1909 թ. հունիսին Փարիզից կաթողիկոս Իզմիրլյանին գրած մի նամակն, ուր ասվում է, որ նա ֆրանսերեն լեզվով պատրաստել է հայոց հին բանաստեղծությանը նվիրված ընդարձակ մի աշխատություն բազմաթիվ նկարներով։ Այդ նամակից երևում է, որ լուսանկարումների գործը կազմակերպելու աշխատանքն իր վրա է վերցրած եղել Կոմիտասը։ Չոպանյանը գրում է. «...Պատրաստած եմ ընդարձակ գործ մը ֆրանսերեն լեզվով, հայոց հին բանաստեղծութեան մասին (Խորենացի, Եղիշե, Նարեկացի, Շնորհալի և այլն). բազմաթիվ գեղեցիկ հատվածներ թարգմանած եմ, ուսումնասիրություններով, իմ հրատարակութեանցս ամենեն կարևորը պիտի ըլլա ասիկա։ Կը ցանկանամ զարդարել այդ գիրքը բազմաթիվ պատկերներով, հայ արուեստի նմուշներով։ Ատոր համար նշանակած էի էջմիածին գտնվող շատ մը առարկաներ (նկար, վարագոյր, քանդակ և այլն) ինչպես և պատկերազարդ հին ձեռագրերու միջեն 15—20 նկարներ. Կոմիտաս վարդապետն հանձն առած է լուսանկարները հանել տալու և ինձ ուղարկելու գործով զբաղվել և համոզած է լուսանկարիչ Պ. Դատյանը, որ աժան գնով պատրաստե այդ լուսանկարները (քանի որ միջոցներս սուղ են)։ Կոմիտաս վարդապետը ինձ իմացուց, թե մեծ մասամբ պատրաստ են լուսանկարները, բայց դեռ չե ղրկած, որովհետև կարելի չէ եղած տակավին ձեռագրերու լուսանկարներն ալ հանել։ Խորապես շնորհակալ կըլլայի Ձեզ, եթե հաճեիք հարկ եղած հրամանը տալ, որպեսզի ձեռագրերու լուսանկարներն ալ հանվեն և ինձ ուղարկվեն, որքան կարելի է շուտով...»[2]։

Արժեքավոր է Գևորգյան ճեմարանի Մանկավարժական խորհրդի 1909 թ. փետրվարի 18-ի արտակարգ նիստի արձանագրությունը, որից երևում է, որ ճեմարանի տեսուչը 1908—1909 ուսումնական տարվա նախահաշիվ է ներկայացրել կաթողիկոսի տեղակալին, որը չի հաստատել նախահաշիվը և ճեմարան է ուղարկել նոր նախահաշիվ, ուր նախատեսված չի եղել Կոմիտասի քառաձայն խմբի խմբավարական պաշտոնը, ճեմարանում հինգ տարուց ավել պաշտոնավարած ուսուցիչների աշխատավարձի հավելումը, մատենադարանապետի աշխատավարձը, տնտեսական որոշ ծախսեր և այլն։

Տեղակալի հիշյալ նախահաշիվը դժգոհություններ և բողոքներ է առաջ բերում ճեմարանի դասախոսների մեջ։ Դասախոսներն հատկապես բողոքել են Կոմիտասի խմբավարական պաշտոնը կրճատելու դեմ։ Կոմիտասը նկատի ունենալով, որ իր առարկան և կատարած աշխատանքները չի գնահատվում

---

[1] Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Գևորգյան ճեմարանի արխիվ, թղթ. № 38, վավ. № 3, էջ 140։

[2] Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Անհատական արխիվների ֆոնդ (Իզմիրլյանի արխիվ), թղթ. № 14, վավ. № 523։

տեղակալի կողմից՝ հրաժարվել է ճեմարանում աշխատելուց։ Այդ մասին արձանագրության մեջ գրում են.

«...Հ. Կոմիտասը հայտնեց, որ ինքը անպատված զգալով իրեն, հրաժարվում է հենց այսօրվանից պաշտոն վարել ճեմարանում, որովհետև նկատում է, որ իր գոյությունը ճեմարանում ավելորդ է համարում Տ. Տեղակալի կողմից, ավելի ստացած ռոճիկները (ըստ նոր հաստատված նախահաշվի) Հ. Կոմիտասը հայտարարում է, որ պետք է ետ վճարե իր միաբանական ռոճիկներից։

Ամբողջ ուսուցչական խումբը մեծ վիրավորանք համարելով Տ. Տեղակալի այդպիսի տարօրինակ և անհասկանալի վարմունքը ճեմարանի և ուսուցչական խմբի դեմ, միաձայն որոշեց, որ միանգամայն հիմնավոր համարելով պ. Տեսչի երկյուղը անհայտ նպատակով կրճատված նախահաշվից առաջ գալիք աշակերտական խլրտումների մասին, դրա ամբողջ պատասխանատվությունը թողնում է Տ. Տեղակալի և յուր «առանձին խորհրդի վրա»։ Ինչ վերաբերում է ուսուցիչների ռոճիկների մեջ արած փոփոխություններին, ուսուցիչներն հայտնեցին, որ և ռոճիկների հապալումն նրանք ամենևին ընդունել չեն կարող և իրենց ուսումնական տարվա սկզբին կապած պայմանի համաձայն կպահանջեն իրենց ռոճիկը։ Իսկ որովհետև, չնայելով բազմադիմի գրավոր և բանավոր պահանջներին, ուսուցիչները ամիսներե ի վեր ռոճիկ չեն ստանում, մանկավարժական ժողովը որոշեց վերջին անգամ վճռականապես խնդրել պ. Տեսչին, մինչև փետրվարի 22 լրացնել նոյեմբեր, դեկտեմբեր, հունվար և փետրվար ամիսների լիակատար ռոճիկները, հակառակ դեպքում ստիպված կլինեն դիմելու իրենց համար անախորժ միջոցների։

Պ. Տեսուչը և ուսուցչական խումբը միաձայն հայտնեցին Հ. Կոմիտասին իրենց ջերմ ցավակցությունը և խնդրեցին դեռևս սպասել գործի ընթացքին։ Հ. Կոմիտասը ցավելով հայտնեց, որ յուր որոշումը փոխել անհնարին է համարում, որովհետև նա ոչ մի կերպ չի կարող իրեն հասցրած այդ վիրավորանքը տանել»[1]։

Կոմիտասը որոշ ժամանակից հետո թողնում է ճեմարանը և գնում է արտասահման։

Այդ մասին 1910 թ. հուլիսի 30-ին Ս. Առաքելյանը բանասեր Տիրայրին գրել է. «...Անցյալն «Մշակ» լրագիրները պատրաստել էի, որ ուղարկեմ, նայել պարոն Շիրվանզադեին. վերցրեց տարավ։ Գուցէ լսած չեք լինել Կոմիտաս վարդապետն հեռացել է Էջմիածնից, ասելով որ իմ նեղությունս ավելորդ կորչում է, ոչ ոք ուշ չի դարձնում, քանի որ Եվրոպա ավելի թանկ են գնահատում ու գնացել է Պոլիս, իբր թե այնտեղից պետք է արտասահման դնա...»[2]։

1910 թ. հոկտեմբերին Կոմիտասը լինում է Կ. Պոլսում, որտեղից անցնում է Ֆրանսիա համերգներ և դասախոսություններ տալու նպատակով։ 1911 թ. Կոմիտասը գնում է ֆրանսիական Սեն-Մալո քաղաքը Համբարձում Մելիքյանի մոտ հյուր, որտեղից Հ. Մելիքյանը երկտող նամակ է գրել Քիշինև Տիրայր վարդապետին, այս նամակի վերջում երկտող է գրել նաև Կոմիտասը։ Մեջ ենք բերում Հ. Մելիքյանի այս երկտողը։

«Հայր Կոմիտասը մի քանի օր է, որ մոտս է և շատ ուրախ ժամեր ենք

---

[1] Հայկական ՍՍՌ Պետական Մատենադարան, Արխիվային բաժին, Գևորգյան ճեմարանի արխիվ, թղթ. № 27, վավ. № 250։

[2] Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Անհատական արխիվների ֆոնդ, թղթ. № 125, վավ. № 39։

անցնում, միշտ հիշում ենք քեզ և ի հարկե շատ ենք խոսում մեր խեղճ Էջմիածնի դրության մասին...»։ Մեջ ենք բերում նաև Կոմիտասի կատակախառն երկտողը, ուր գրում է «Զմբլ Թորոս բիծա.

Շատ ես իք եղել հա՞, Փարիզից գնացել ընկել ես Քիշնև...

Օխա՜յ, շատ լավ է եղել. կերա՞ր...[1], ես, ինչպես տեսնում ես, Համբարձումի մոտն եմ՝ հյուր, վաղը կերթամ Փարիզ, Բերլին, Վիեննա, և ապա Կ. Պոլիս։

Շատ բարևներ քեզ՝ քաչալությանդ»[2]։

1911 թ. դեկտեմբերին Կոմիտասը գտնվում էր Կ. Պոլսում։ Նա իր շուրջն է հավաքում երաժշտության ընդունակ հայ երիտասարդությանը և նրանց երաժշտական կրթություն տալիս։

Ուշագրավ է 1911 թ. դեկտեմբերի 26-ին Կ. Պոլսից Գևորգ արքեպիսկոպոսին ուղղած Կոմիտասի դիմումը, որով հայտնում է, որ ինքը մնալու է Կ. Պոլսում և խնդրում է կարգադրություն անել վարչությանը, որ Էջմիածնի Միաբանության անդամ լինելու պատճառով ստացած իր աշխատավարձը այլևս դուրս չգրեն։ Դիմումի մեջ նաև հայտնում է, ինքը ցանկացել է գնալ Էջմիածին և անձամբ լուծել հիշյալ հարցը, սակայն այդ չի հաջողվել՝ Ռուսական դեսպանության կողմից իր անցագիրը չվավերացնելու պատճառով։

«Որովհետև ես մնալու եմ Կ. Պոլիս,—գրում է նա,— ուստի խնդրում եմ, բարի եղեք հրամայելու, որ կարճեն իմ Էջմիածնի Միաբանական ռոճիկս։

Կուզեի անձամբ գալ ու հրաժեշտս տալ, բայց ռուս կառավարության ներկայացուցչությունները՝ դեսպանատունն ու Հյուպատոսարանը, ըստ պահանջման օրինաց, իբր Տաճկահպատակ, հոգևորական, անցագիրս չվավերացրին, (ուղիղ 4 շաբաթ է անցել, որ դիմել են Պետերբուրգ և ցարդ պատասխան չկա բարձրագույն իշխանությունից). ես էլ ժամանակս իզուր չանցնելու համար, սկսեցի գործովս զբաղվել...»[3]։

1912 թ. հունվարի 25-ին Էջմիածնի Միաբանությունը ստանալով և քննության առնելով Կոմիտասի հիշյալ դիմումը, որոշում է.

Նկատի ունենալով, որ Կոմիտասը նոյեմբերի 1-ից Մայր Աթոռը չի վերադարձել և աշխատավարձ չի ստացել, կարճել նրա ռոճիկը և վճռի մասին հայտնել Կոմիտասին[4]։

Կոմիտասը եղել է վերին աստիճանի մարդասեր և ընկերասեր, հարկ եղած դեպքում օգնել է իր ընկերներին և բարեկամներին։ Այդ տեսակետից արժե մեջ բերել Կոմիտասի 1912 թ. ապրիլի 22-ին Կ. Պոլսից բանասեր Տիրայր վարդապետին ուղղած մի նամակը, որով խնդրում է Տիրայրին, որ բոլոր միջոցներով օգնի ճեմարանի իրենց նախկին ընկեր՝ Մ. Հեքիմյանին Բեսարաբիայի թեմում քահանա նշանակվելու համար։

Նա գրում է. «Պրուսայեն եկել էր Տէր Մատթեոս քահանայ Հեքիմյանը, մեր ճեմարանական Պելեճիկցի ընկերը անշուշտ հիշում ես և թախանձանքով խնդրում էր, որ եթե Բեսարաբիոյ Ռեմի մէջ յահանայի բաց տեղ կա, իրան հովվութեան պաշտոնով տեղափոխենք. տեղական քահանաները նախանձոտ

---

[1] Բաղմակետը Կոմիտասինն է։

[2] Հայկ. ԽՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Անհատական արխիվների ֆոնդ, թղթ. № 132, վավ. № 43։

[3] Հայկ. ՍՍՌ Պետական Մատենադարան, Արխիվային բաժին, Սինոդի կարգադրիչ մաս, թղթ. № 235, վավ. № 12, էջ 1—2։

[4] Նույն տեղում, էջ 3—6։

են և հանգիստ չեն տալիս իրեն. ինքն էլ 3 հոգինոց ընտանիք է կազմել. ինքը, տիրուհին և որգին Ստեփանը, որ պետական դպրոցում ուսանում է. արդեն 19 տարեկան է և շատ լավ տղա է, ընդունակ, շնորհքով։ Արդ, ես էլ ասացի, որ դրժվար թէ հաջողվի, զի ռուսահպատակության խնդիր կա. այնուամենայնիվ նորան միամտացնելու համար քեզ գրում եմ. եթէ հնար է և տեղ ունէք, կանչեցէք, շատ լավ քահանա է և շատ օգտակար կարող է լինել ժողովրդին։ Այստեղ եկամուտներն այնքան ոչինչ են, որ մարդիկ հազիվ հացի փող են ճարում։ Խնդրում եմ անմիջապես մի երկտողով իմաց արա ինձ, որ միամտացնեմ խեղճին...[1]։

Ինչպես հայտնի է, հայկական բուրժուական և պահպանողական մամուլը երբեմն ծաղրել և զանազան հերյուրանքներ է տարածել մեծ երաժշտագետի հասցեին, մեղադրել են նրան այն լսարի մեջ, որ նրա երգերը շատ պրիմիտիվ են «գոմի հոտ է գալիս» և այլն։

Մ. Օրմանյանի 1912 թ. մարտի 20-ին Տիրայրին ուղղած մի նամակից պարզվում է, որ «Հովիտ» շաբաթաթերթը ինչ որ զրպարտություններ է տարածել մեծ երաժշտագետի հասցեին, որի առթիվ գայրացել է Մ. Օրմանյանը և այդ մասին գրում է նա. «...Կոմիտաս վարդապետին համար զրպարտությունը հիմնովին սուտ էր և կզարմանամ, որ «Հովիտ»-ը եղավ այդ զրպարտության հրապարակ նետողը...»[2]։

Մաղաքիա Օրմանյանի 1912 թ. օգոստոսի 22-ին Տիրայրին գրած մի ուրիշ նամակից երևում է, որ Կոմիտասը այդ ժամանակ վերադարձել է Եվրոպայից և անմիջապես մեկնել է իր ծննդավայրը՝ Կուտինա օդափոխության համար։ «Կոմիտաս վարդապետը Եվրոպայե դարձավ,— գրում է նա,— բայց անմիջապես յուր հայրենիքը Քեոթինա գնաց օդափոխության...»[3]։

Կոմիտասի ուշադրության առարկան են եղել բոլոր ժողովուրդների ժողովրդական երգերը, այդ թվում նաև ռուսական ժողովրդական երգերը։ Այդ տեսակետից արժեքավոր է Մ. Օրմանյանի 1913 թ. հունվարի 11-ին Տիրայրին ուղղած նամակը, որից պարզվում է, որ Կոմիտասը թարգմանել և ուսումնասիրել է ռուսական ժողովրդական երգերը։ «...Կոմիտաս վարդապետը,—գրում է նա,— թարգմանեց ծրարյալ ռուսերեն երգերը. որ շատ հեռու կտանի հյուսիսական աշխարհայեցողությունը...»[4]։

Կոմիտասի Կ. Պոլսի գործունեության մասին արժեքավոր տեղեկություններ է տալիս 1913 թ. մարտի 8-ին պատրիարք Մ. Օրմանյանի կողմից Կարապետ եպիսկոպոսին գրված նամակը. «Կոմիտաս երաժշտախումբ է, երգեցիկ խումբ մը կպատրաստե,— գրում է նա,— մասնավոր դասեր կտա, հայերեն գրություն կպատրաստե առոգանության և երգեցողության վրա. Լայպցիկ երգեր հրատարակել կուտա...»[5]։

Կոմիտասը, ինչպես Եվրոպայում, այնպես էլ Անդրկովկասում, մի շարք դասախոսություններ և երեկույթներ է տալիս, ակտիվ մասնակցություն է ունենում գրական-երաժշտական հանդեսներին։

Ինչպես հայտնի է բանաստեղծ Հովհաննես Թումանյանի գլխավորությամբ 1913 թ. Թիֆլիսում կազմակերպում է «Բանաստեղծությունը, նկարչությունը և

---

1 ՀՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Անհատական արխիվների ֆոնդ, (Տիրայրի արխիվ), թղթ. № 132, վավ. № 90։

2 Նույն տեղում, վավ. № 94։

3 Նույն տեղում, № 117։

4 Նույն տեղում, վավ. № 155։

5 Նույն տեղում (Կարապետ եպիսկոպոսի արխիվ), թղթ. № 100, վավ. № 146։

երաժշտությունը հայոց եկեղեցում» թեմայով զեկուցումներ։ Այդ առթիվ Հովհ. Թումանյանը նախօրոք նամակներով դիմում է մի շարք մասնագետների, որոնց թվում Կոմիտասին, բանասեր Գարեգին Հովսեփյանին և խնդրում դասախոսություններ կարդալու։ Ցավոք սրտի, Հ. Թումանյանի Կոմիտասին ուղղած այդ նամակը մենք չկարողացանք գտնել։ Մենք գտանք Հ. Թումանյանի այդ առթիվ 1913 թ. հուլիսի 11-ին, Թիֆլիսից Գ. Հովսեփյանին գրած նամակը, որով հայտնում է, որ աշնանը հայկական գրողների նախաձեռնությամբ կազմակերպվելու է գրական-երաժշտական երեկույթ, որտեղ լսվելու են մի շարք զեկուցումներ, այդ թվում նաև նկարչության մասին խոսելու է Գ. Հովսեփյանը, իսկ երաժշտության մասին՝ Կոմիտասը։

Հովհ. Թումանյանը գրում է. «Մտադիր ենք աշնանը Գրողների Ընկերության նախաձեռնությամբ կազմակերպել մի մեծ հրապարակական գրական-երաժշտական երեկույթ հետևեալ բովանդակությամբ. բանաստեղծությունը, նկարչությունը և երաժշտությունը հայոց եկեղեցում։

...Երաժշտական մասի կազմակերպության և ղեկավարության համար խնդրել եմ Կոմիտաս վարդապետին, իսկ ձեզ խնդրում եմ, որ հանձն առնեք նկարչական մասը կազմակերպելու, խոսելու, մոգական լապտերով ցույց տալու վերջապես ինչպէս որ դուք կը կամենաք։

Ամեն միջոց ու հեշտություն Ձեզ կտրվի, բայց այսուամենայնիվ խնդրում եմ Ձեզ պայմաններն ու պահանջները գրեք ինձ էս հասցէով. Ахалцих (уравель) Ованесу Туманяну. Ես համոզված եմ, որ Ձեր սրտովը կլինի էս տեսակ մի մեծ երեկոյթ և չեք կասկածելու նրա ահագին հաջողությունն ու նշանակությունը։

Կտեսի երևի մի քանի երեկո»[1]։

Դեռ իննսունական թվականներից սկսած հայ բանասերների, գիտնականների և երաժշտագետների ուշադրության կենտրոնում են եղել մեծ երաժշտագետ Կոմիտասը և նրա ստեղծագործությունները։ Նրանով և նրա ստեղծագործություններով հետաքրքրվել են նաև եվրոպական գիտնականները և երաժշտագետները։ Այդ մասին բավականին տեղեկություններ են պահպանվել մեր բանասերների և գիտնականների գրած նամակներում։ 1914 թ. հունվարի 4-ին Գ. Հովսեփյանին ուղղած մի նամակում բանասեր Ա. Զուբարյանը գրում է.

«...Կոմիտաս վարդապետը հոս կմնա մինչև հունիսի 18—20, հետո Լոնդոն և Մանչեստր կանցնի, եթե հաջողվի նվագահանդես սարքել, հետո իսկույն Պոլիս կդառնա, հուլիսի սկզբներին այնտեղ կըլլա, իսկ եթե նվագահանդեսը սարքել չհաջողվի, ամսույս վերջը Պոլիս կըլլա։ Իսկ Թերլեմեզյանը միշտ կը մնա Պոլիս...»[2]։

Ինչպես երևում է Փարիզում իր գործերը վերջացնելուց հետո, Կոմիտասը մեկնում է Կ. Պոլիս։

1914 թ. համաշխարհային առաջին պատերազմի օրերին Կոմիտասի Կ. Պոլսում մնալը անհանգստություն է առաջ բերում հայ բանասերների, գիտնականների և արվեստագետների մեջ, որոնք նախազգում էին Արևմտահայ ժողովրդի դլխին դալիք արհավիրքը։ Այդ տեսակետից ուշագրավ է Ա. Զոսյանյանի 1914 թ. նոյեմբերի 12-ին Փարիզից Մաքսուդյանին գրած նամակը.

---

[1] ՀՍՍՌ Պետ. Մատենադարան, Արխիվային բաժին, Անհատական արխիվների ֆոնդ, թղթ. № 185, վավ. № 29։

[2] Նույն տեղում (Գ. Հովսեփյանի արխիվ), թղթ. № 96, վավ. № 13։

«...Ինչ լուր Կոմիտաս վարդապետեն, շատունց է, որ չկրցա դրել իրեն, իրմէ ալ լուր չունեմ։ Երանի թէ Կովկաս եկած ըլլար։ Ցավալի բան՝ եթէ Պոլիս մնացած է...»[1]։

1914 թ. համաշխարհային առաջին պատերազմն ընդհատում է գիտության և արվեստի նորմալ ընթացքը։ Ընդհատվում են նաև Կոմիտասի երաժշտական աշխատանքները, կտրվում է նա արտասահմանից և փակվում Կ. Պոլսում։

1915 թ. տեղահանում և աքսորում են տաճկահայ ժողովրդին. աքսորում են նաև Կոմիտասին։ Աքսորի ճանապարհին նա տեսնում է Թուրքի արյունոտ յաթաղանի սարսափները, տեսնում է հայ մայրերի, օրիորդների, երեխաների, ծերերի և երիտասարդների կոտորածները։ Մի միջնորդի շնորհիվ Կոմիտասին 1915 թ. վերադարձնում են Կ. Պոլիս։ Սակայն, հայ ժողովրդի տեղահանման և կոտորածների սարսափների ահավոր ծանրությունը չէր կարող տանել նրա նուրբ և զգայուն հոգին և 1915 թ. խելագարվում է։ Նա 1918 թ. զինադադարից հետո նրան տեղափոխում են Փարիզի հոգեբուժական հիվանդանոցը։

Կոմիտասի հոգեկան հիվանդությունը մեծ վիշտ է պատճառում հայ ժողովրդին և ամբողջ գիտական աշխարհին, մանավանդ երբ պարզվում է, որ անհնարին է վերականգնել Կոմիտասի առողջական վիճակը։ Այդ մասին 1921 թ. Փարիզից գրած մի նամակում Ա. Զոպանյանը Գ. Հովսեփյանին գրում է. «...Կոմիտաս վարդապետի առողջության վիճակը որևէ բարելավում ցույց չի տար դժբախտաբար, ես կվախենամ, որ մեր խեղճ, թանկագին բարեկամին բուժումը անհուսալի ըլլա...[2]։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, մեծ ուշադրություն և հետաքրքրություն է ցուցաբերվում Կոմիտասի նկատմամբ։

Կոմիտասի մասին սկսում են տպագրվել մի շարք ուսումնասիրություններ, հոդվածներ, հիշողություններ։ Տպագրվում են նաև Կոմիտասի ձայնագրած երգերը, հոդվածները և ուսումնասիրությունները։

Կոմիտասի ստեղծագործությունների նկատմամբ եղած մեծ ուշադրության մասին է վկայում ակադեմիկոս Հակոբ Մանանդյանի 1927 թ. հոկտեմբերի 26-ին Հայաստանի Լուսժողկոմին ուղղած հետևյալ գրությունը.

«Ինստիտուտիս պատմական-հասարակագիտական բաժինը քննության առնելով ընկ. ընկ. Մ. Աբեղյանի և Կոմիտաս վարդապետի կազմած հայ ժողովրդական երգերի ժողովածուի խնդիրը, հավանություն տվեց և հաստատեց իր ընտրած հանձնաժողովի արձանագրական որոշումները և իր կողմից կարևոր համարեց, որ քառյակների գիտական ժողովածուն լույս ընծայվի իբրև ինստիտուտի հրատարակություն։ Բաժինս նաև կարևոր համարեց, որ այդ հավաքածուի ընդարձակ առաջաբանում տպագրվեն ընկ. ընկ. Մ. Աբեղյանի ու Կոմիտաս վարդապետի այն աշխատանքները, որ վերաբերվում են ժողովրդական երգերի ուսումնասիրության...»[3]։

Երկար տարիներ Փարիզի հոգեբուժական հիվանդանոցում մնալուց հետո, 1935 թ. հոկտեմբերի 22-ին վախճանվում է Կոմիտասը։ Սովետական Հայաս-

---

[1] Հայկ. ՍՍՌ Պետական Մատենադարան, Արխիվային բաժին, Անհատական արխիվների ֆոնդ (Մաքսուդյանի արխիվ), թղթ. № 25, վավ. № 463։

[2] Հայկ. ՍՍՌ Պետական Մատենադարան, Արխիվային բաժին, Անհատական արխիվների ֆոնդ (Գ. Հովսեփյանի արխիվ), թղթ., № 96, վավ. № 37։

[3] Նույն տեղում (Հ. Մանանդյանի արխիվ), թղթ. № 285, վավ. № 221։

տանի կառավարության համաձայնությամբ նրա դիակը տեղափոխում են Երևան և թաղում պանթեոնում։ Կառավարության միջոցներով 1955 թ. Կոմիտասի գերեզմանի վրա կանգնեցնում են նրա բրոնզյա արձանը։

Կոմիտասի վերաբերյալ հիշյալ վավերագրերը գալիս են լուսաբանելու հայ բազմավաստակ երաժշտագետի կյանքի և գործունեության այս կամ այն շրջանի մութ էջերը, որոնք արժանի են մասնագետների ուշադրությանը։